


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 Մճ.
Պատուագ 10 Մճ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 Մճ.
Պատուագ 5 Մճ.
Օտար երկիրներու 30 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 2 զրոնոց թու զի՛ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքունի խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ պիտի թիւն խմբագր-
—Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրքընար Զատուկի թիւ
198 : Նօրօ խան : Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յողում, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏ ԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ՅՈՒՆԻՎԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սրեւելեան Բումբէլի մէջ Ռուսա-
կան քաղաքականութեան վրայ փո-
փոխութիւն մը տեսնուիլ սկսած է :
որ յոյս կուտայ թէ Պէրլինի դաշնա-
դրութեան արամագրութիւնը այդ-
դաւառին մէջ անյաղթելի դժուա-
րութեանց չը պիտի հանդիպին, ինչ-
պէս ցարդ կը վախճուէր : Թայմը լը-
րագրին Կ. Պոլսոյ թղթակիցին, որ ընդ-
հանրապէս լաւ տեղեկութիւն ունե-
ցող թղթակից մ'է, քանի մը շաբաթ
Սրեւելեան Բումբէլի մէջ նստած լի-
նեղէն օգուտ քաղելով, այս նկատ-
մամբ ինչ ինչ տեղեկութիւններ կու-
տայ զորս արժան կը համարուի մեր
ընթերցողաց հաղորդել :

Կերեկի թէ, կըսէ, երկրին Ռուս
պաշտօնատարաց նոր հրահանգ արը-
ւեր է Պէրլինի դաշնագրութեան ող-
ւոյն աւելի յարմար ընթացք բռնելու :
Տօնտուքօֆ-Գօրսաքօֆ իշխանը Սօ-
ֆիայի մէջ աւելի զգուշացողութեամբ
գործածել սկսաւ, և Սրեւելեան Բու-
մբէլի կուսակալ Սթօլիբինի դորավարն
այ Եւրոպական յանձնախումբին նկատ-
մամբ աւելի հաշտարար ընթացք մը
կը բռնէ : Այս բաներուն բնական
հետեանքը սա եղաւ որ Պուլքարայ
յուզումն առ այժմ նուազած է :

Սակայն Եւրոպական յանձնա-
խումբին գործը փափաքուածին չափ
շուտ յառաջ չերթար : Դեռ չկրցաւ
պիւտօէ մը սահմանել, որովհետեւ
տեղական պաշտօնատարք հարկ եղած

տեղեկութիւնները տալու կը դանդա-
ղին : Այս յաղագման մէկ պատճառն
ալ առժամանակեայ կառավարութեան
ներքեւ հաշիւներուն խիստ անկանոն
կերպիւ բռնուած լինելն է :

Կաղմական կանոնադրութեան
խմբագրութիւնն ալ շատ յառաջ չէ
կրցած տարուիլ : Թէպէտ, կըսէ Թայ-
մը թղթակիցը, զխաւոր կէտերու
վրայ կարծեաց անհաշտելի տարբե-
րութիւն մը չկայ, սակայն անյոյ-
տուղ վիճարկութիւնը անպակաս
են, և դործին յառաջագման արդեւ
կը լինին : Եւ որովհետեւ յանձնախում-
բին վիճաբանութեանց ատենագրու-
թիւններն հրատարակել որոշուած է,
և ֆիլիպին մէջ յանձնախումբը ալ
պաղարկան դիւրութիւններ չունի,
շաբաթ միայն երկու նիստ կրնայ
ընել : ասով հանդերձ ատենագրու-
թեանց տպագրութիւնը շատ ետ մը
նացած է :

Այս դժուարութեանց առաջին
առնելու համար, յանձնախումբն որո-
շեր է յաճախակի կէս պաշտօնական
նիստեր ընել՝ առանց ատենագրաց
ներկայութեան՝ ինչ ինչ խնդրոց նը-
կատմամբ ամենէն աւելի շահ ունե-
ցող պատուիրակաց միջև ծագած
անհամաձայնութիւնները կարգադ-
րելու համար, և կը յուսացուի թէ
այս կերպիւ պաշտօնական նիստերու
շատ դործ չմնար և դործը կը դիւրա-
նայ :

Յանձնախումբին անգամներէն ոմանք,
իրենց պաշտօնական պարտաւորու-
թեանց հետ նաեւ դադրականաց և
ֆիլիպին աղքատ բնակչաց թշուառու-
թիւնն սխալելու յատուկ խնամք կը
տանին : Անդրիոյ և Գաղղիոյ պատ-

ւիրակներն այս մասին մասնաւոր ջանք
մը կը ցուցնեն : Անդրիոյ պատուիրակ
Սըր Յըրմընտ Ուօլֆ Անդրիոյէն բա-
ղում դրամական նպաստ ստանալով՝
Արեւելեան Բումբէլի տղքատ բնակ-
չաց կը բաշխէ խնայողական եղանա-
կաւ :

Թայմը թղթակիցն այս նըկատ-
մամբ Ռոտթըի դադրականներուն վը-
րայ ալ տեղեկութիւններ կուտայ՝ ը-
սելով թէ միայն Եւրոպական խումբին
հանգը 40000 էն աւելի խաւմ գաղ-
թականը կան յետին թշուառութեան
մէջ, որք եթէ ան յապաղ օգնու թիւն
չընդունին, ներկայ ձմեռուան մէջ
ցուրտէն ու անթոթութենէ ամբողջա-
պէս պիտի կորնչին :

Պուլքարայէն եկած վերջին լու-
րերը կը ծանուցանեն թէ յանուն
Պուլքար ազգին ազերսագրի մը կ'ըս-
տորագրուի Եւրոպական տէրու-
թեանց ուղղեալ, յորում Ռուսաց
ղինուրական կառավարութեան եր-
կու տարի ևս Պուլքարի մէջ շա-
րունակումն և իշխանին ընտրութեան
ալ երկու տարի յետագոյն կը
խնդրուի :

Նօյի—Պաղարի խնդրոյն բանակ-
ցութեանց համար արտաքին դործոց
նախարար Գարաթոտորի փաշան և
Պետական խորհրդի նախագահ Ալի
փաշան պատուիրակ կարգուեցան :

Սոյն բանակցութեանց նկատմամբ
նոր լուր մը չկայ :

Պատերազմին մէջ ինկած Օսման-
եան դերեաց համար Ռուսիոյ կողմէն
պահանջեալ ծախսոց վրայ բանակցու-

թիւնները դեռ կը շարունակեն, և
կըսուի թէ 400 հազար Ֆրանքոյ
գումարի մը տարբերութիւն կայ Օս-
մանեան և Ռուսական պատուիրա-
կաց միջև : Հետեաբար կը յուսաց-
ուի որ այս խնդիրն 'ի մօտայ կարգադ-
րի :

Եթէ այս դժուարութիւնն ալ
վերնայ, Թուրքո-Ռուսական դաշնագ-
րին ստորագրութեան այլ ևս արգելք
չպիտի մնայ :

Սրեւելեան Բումբէլի ելեմտից ընդ-
հանուր տնօրէն Պ. Շմիտ քանի մ'օ-
րէն մայրաքաղաքս Կ'ապտուի :

Կըսուի թէ Պ. Շմիտ մտադիր է
հրաժարիլ ներքոյ պաշտօնէն, զոր
Սրեւելեան Բումբէլի եւրոպական յանձ-
նախումբն յանձնած էր իրեն և վե-
րջստին Օսմանեան կայսերական Պաշ-
քային մէջ իւր նախկին պաշտօնն ըս-
տանձնել, որ էր Պանքայի ճիւղերուն
տեսչութիւնը :

Վաղը թիւը այս առաւօտեան
թուոյն մէջ կը հերքէ այն յուրը՝ թէ
Անդրիական կառավարութիւնն Ս-
սիոյ բարենորոգմանց համար նոր
ժանուցագիր մը զրկեր է Բ. Դրանս :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(ՀԱՎԱՍ)

Վիլնէա 23 յունիս

Նրեսիտանոց ժողովոյն այս առաւ-
նտին մէջ, նախարարաց խորհրդոյ նա-
խագահ հարցման մը պատասխանելով
յայտարարեց թէ Ռուսիոյ մէջ ճարակեալ
հիւանդութիւնն իրիւ ժանտախտ նկատ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆ ԱՆՑԵԱՐԸ, ՆԵՐԱՅԵՆ ԵՒ
ԱՊԱՐԵՆ

Սրբազան տէր, Տեսիք և Տի-
րուհիք :

Ատենաբանին տա ամիս պարտը,
որ է իւր խօսից նիւթ բացատրել և
ունենդրաց մտադրութիւնը հրաւ-
րել, այդ պարտը ինձմէ վերցուե-
ցաւ : Հրատարակեալ ծանուցումը
ըստ արդէն յայտնի ըրաւ, և որով-
հետեւ զխանարով հոս եկած էք, կը
սիրեմ հետեցնել թէ ակտորթելի է
ձեզ լսել Հայոյն անցեալը, Հայոյն
ներկայն և Հայոյն ապագայն : Այլ
թէ ինչո՞ւ այդ նիւթը ընտրեցի, ոչ
մեկնութեան կը կարօտի և ոչ ալ ա-
պացուցանելու պէտք ունի : Բնական
հակամիտութիւն մը կը յորդորէր զիս
ազգային նիւթ մը ընտրել ազգային
լրարանի մը մէջ : Բարեկամաց բաղ-
ձանքն ալ ինձ հրամանէ աւելի զօ-
րաւոր էր : և ինչո՞ւ ծածկեմ ինչ-
պէս ևս, նայեալս բոլոր տնկող իրք

ստուգիւ կը սիրեն որ հնչէ իրենց ա-
կանջը հայութեան վէպը և բաղդը
և յոյսը : Այսու հանգերձ նորու-
թեան ձիւքն ալ ունենալ բաղձալի
էր ինձ, և զուարճացնել զձեզ, օ-
րինակ իմն հայկական ուղեորութեան
մը յիշատակներով, ինչպէս կ'ընէր
լուսահոգի Հայրն Կրեմէն վարդա-
պետ Սիպիլեան, և ինչպէս ըրաւ ար-
ժանապատիւ Հայրն Գարեգին վարդա-
պետ Սրբանձատեանց յերկուս երե-
կոյնի, որ պատմեց մեզ մեր հայրե-
նական երկիրներուն և անոնց բնակ-
չաց այժմեան վիճակը, և չեմ գիտեր
թէ իւր խօսից մէջ ո՞րն աւելի էր,
տեղեկութեանց ծանրակշիւթիւնը,
թէ ազգասէր իղձը, պատմաւածնե-
րուն ճշգրութիւնը թէ նորութիւնը :
Քանի որ նմանօրինակ բանախօսու-
թեան մը թէ ո՞րն է թէ նիւթը ինձ ան-
հրաժեշտ էր, հարկ էր որ ընդհանուր տե-
սութեանց սահմանին մէջ մնամ, և
ինչ որ յայտնի մասին ուշի ուշով դըն-
նեցի, ձեզ հաղորդեմ : Բայց որովհե-
տեւ յոկամայ այդ պարտոյ ներքեւ

կը կենամ, կանխաւ կ'ուզեմ ծանու-
ցանել ձեզ թէ ատենաբանութիւնս
վերացական և իմաստասիրական խոր-
հորդածութիւններէ խորջելով դործ-
նական և իրական խնդրոց հետա-
մուտ պիտի ըլլայ :

Ա.

Այս պատճառաւ, սիրելի՛ ուն-
կընդիրք իմ Հայոյն անցեալը զննած
ժամանակ չեմ ուզեր հրաւիրել ձեզ
մտադրութիւնը մինչև նախապատ-
մական ժամանակաց վէպերուն վրայ :
Չեմ փնտրեր Հայոյն անցեալը Սուրբ
Գրոց չիբերուն մէջ, և ոչ ալ վիճել
կուզեմ թէ եղբմական դրախտին
դիրքը մեր հայրենեաց կը պատկա-
նի արդեօք : Արդեօք Եփրատն և
Տիգրիսն Մովսէսի համանուն և հա-
մազիւր են հիմայ այն անունը կրող
գետերուն : արդեօք նախաձեռնոյն
բարբառը Հայերէնն էր : արդեօք
Նոյնան տապանին կայարան եղող Ա-
րարտը մեր Մասեաց դադարին է :
արդեօք մարդ կ'ու թիւն երկրորդ խան-

ձարուրը Նախիջևանի հովիտն է :
արդեօք ճշմարիտ տառածգիտու-
թեան սէրը զինեց Հայկոյ բողբոլը
Բելայ ամբարտաւանութիւնը նուա-
ճելու, այս և ասոր նման խնդիրներ
յուզել ոչ ժամանակին գիտութիւնը
և ոչ դարուս հոգին կը ներեն և ոչ
ալ մեր նպատակին օգտակար կրնայ
ըլլալ :

Իմ դնում թիւններէս բարբառին օ-
տար են ևս պատմական դրութեանց
խնդիրներն : Հայոյն անցեալը չկախ-
ւիր ոչ Մարտարտեան դիւցազուններ-
րէն և ոչ ալ բեւեռագրոց ցլոց տուած
իշխաններէն : Կ'ուզեք կրկնեցէք և
գուք խորեանցեոյն հետ Հայկ, Մարտ
և Տիգրան, Արարատ, Արմաւիր և
Տիգրանական : Կ'ուզեք կրկնեցէք
բեւեռագրոց լեզուով Սասուրիս,
Պելլոսուրիս և Խալոսինիս, Ուրար-
թի, Նախիւր և Մուսասիր : մեր Հայ-
րենիքը, եղբարք, միշտ նոյն Հայաս-
տանն է : Հնախոյր կրնան իրեաց
կարծիքը մեծել, և իրենց սեփհա-
կան դրութիւնը ապացուցանել : Կըր-

Համ է, որ այժմ վերջին օրերն արդ փոքր տեղ կը տրվի և Ռուսական կառավարութիւնն հարկ եղած միջոցները ձեռք առած և հիւանդութիւնն չըմանալը սոսի մանուկները յաջողած է :

Այս ամսուր հասած հետաքրքիր

Վիկտոր 27 յունիս.
Երեւոյտանայ ժողովն 112 ի դէմ 184 քուէով ընդունեց Պէրլինի դաշնագիրը : Երեւոյտանայ խորհրդին նախագահն յայտարարեց թէ կառավարութիւնն համապատասխան է որ Պիտերսբուրգի դաշնագրին քիչ ժամանակէն վարչութեան ծախսեց չափ հասցնել պիտի տան :

Բեքարապետի Սեւորիական դեսպանը կը հեռագրէ թէ Վիկտորիանայն առնուած վերջին լրաց նայելով, յունիս 20ին և 21ին երկու մարդ միայն մեռեր են : անկէ ի վեր ժամատարի ուրիշ դէպք մը չէ տեսնուած : այն տարափոխիկ հիւանդութեան ծախսումը դրապէս կը նշուողի : Յիշեալ հեռագիրը կը հերքէ այն լուրը թէ Մոսկուայի գաւառին մէջ Ռուսական ժողովրդական երեւան եւ լեր է :

Համ 27 յունիս.

Թագաւորական հրամանագիր մը կը պատուիրէ որ Սեւ Ժողով և Սեպտի Ժողով Ռուսական հաւաքականութեան եւ կողմերը քառասունչինայի պայքարութեան և ծխանց երկարելին :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բ. Դրան ներկայացեալ երեւոյտանայ ծրագրին նկատմամբ լա թիւերը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ իւր երկուսն թուով :

Վերջին օրերս երեք ծրագիր առաջարկուած են կառավարութեան : Մին տեղւոյս երկու դրամատեարաց կողմէ, որք իրենց հետ ունին խորհարկ մեծ դրամատեարներն մին, միւս երկու ծրագրերն ալ Ղալաթիոյ գլխաւոր դրամատեարներն միայն կողմէ ներկայացեալ են :

Առաջին ծրագիրն՝ երկրին եւ միտական վիճակն ամբողջապէս ընդգրկող կարգադրութիւն մը կը պարունակէ : այսինքն տեղութեան ընդհանուր պարտքը պիտի կանոնաւորէ, շարժուն պարտքը փոխօրէնէ պարտքի պիտի վերածէ, թղթաւորման ու հինգնոցը պիտի վերցնէ, պայտօնատարաց անվճար միտցած ամսականները պիտի վճարէ, և վերջապէս իմաստուն միջոցներով երկմտից հաւասարակշռութիւն պիտի հաստատէ :

Ըստ որում այսպիսի ընդարձակ ծրագրի մը գործադրութիւնը մեծ երաշխաւորութիւններ կը պահանջէ, ծրագրին հեղինակներն այն երաշխաւորութիւնները մտածելով ճշգրտեցին, և այդ նկատմամբ պէտք եղած առաջարկութիւններն ալ ներկայացուցած :

Նան իշխանաց անունները ուղղել և ժամանակագրութիւնը ճշգրտել : կրնան աշխարհագրական համութեանց լոյս աւելցնել, և ազգաբանութեանց խորին անդունդները իջնալ : մեք առանց իրենց աշխատութիւնը անարդեւ յանդգնելու, մէկ կողմ կը թողուի ինչ որ խնդիր է, և կը հարցնենք ընդհանրապէս : Ինչ էր Հայը մեղմեալ առաջ : կը կրկնեմ մեղմեալ առաջ, վասն զի երբ Հայոցն անցեալը կը նկատեմ, կիմանամ բոլոր սահած դնացած ժամանակը, մինչև ամենամերձ կէտը :

Ուշիմ ուղեւորը որ հին քաղաքաց պայքարութեան կեղծէ, և գիտական հասցեւորը՝ որ հին շինութեանց ինչպէս եղած ըլլալը մակարեւել կը ճշգրտէ, երկուքն ալ աւերակաց վրայ աչք մի նետելով ճշմարտութիւնը կը դուռնակեն : Եր տեսնես դաշտին երեսը ահագին սիւներու, խոյակներու և սրահաւանդաններու կառուցել, իրաւրու խառնուած և կիւտ չափ հազոյն մէջ թաղուած : կը տեսնես նաեւ հին

Միւս երկու ծրագրաց գալով, մին հինգ միլիոն ոսկոյ փոխառուութիւն մը կառավարէ, որ մասնաւորապէս թղթադրամին և հինգնոցին բարձմանը պիտի ծառայէ :

Միւսն ալ նոյնպէս հինգ միլիոն ոսկոյ փոխառուութիւն մը կառավարէ, որ հինգնոցն առաջադրուած ժամանակէ մը յետոյ ընդհանուր պարտուց տակաւնը լուծն և գլխամասանց վճարման յատկանշիքը դուրսը կորոշէ, գումար մը որ տարուէ տարի պիտի աւելնայ :

Երեսու թէ այս վերջին երկու ծրագրաց երաշխաւորութիւնը տեղութեան մարքերն են եղեր : անոնց վարչութիւնը խառն յանձնարումը բի մը յանձնուելու պայմանաւ :

Երեկ, միջոցեւ նախարարք արտաքարկարգի գումարում մը ընելով ինչինչ կարեւոր նիւթայ վրայ կը խորհրդարկեցին, Աստուծո-Հոնդարիոյ դեսպան Զիլի կոմսը Բ. Դուռն երթալով Մեծ-Եպարքոսին հետ առանձին տեսակցութիւն մ'ունենալու փափաք յայտնեց : Հետեւաբար Բարձր խորհրդարին փաշան նախարարաց խորհուրդը թողնելով դեսպանին հետ երկար տեսակցութիւն մ'ունեցաւ :

Մուրիոյ կուսակալ Միտհաթ փաշան տեղեկագիր մը ղրկած է առ Բ. Դուռն Մուրիոյ կուսակալութեան վիճակը ներկայացնելով, և հարկ եղած կարեւոր բարենորոգմանց վրայ կայսերական կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելով :

Մեծ-Եպարքոս Բարձր խորհրդարին փաշան շաբաթ օրը քանի մը բարձրատիկան պաշտօնատարաց ընկերակցութեամբ Օսմ. արուեստական վարժարանն (Մեքիթէսի սանայի) և Սօղուգ-Չէլմէի ղինուսական Բիւշտի դպրոցն այցելելով, աշակերտները քննեց և ներքին կանոնադրութիւններն աչքէ անցուց :

Օտեսայէն Անվէրս ցորեն տանող Արֆա անուն Անգղիական շոգենաւ մը, հինգշաբթիէն ուրբաթ լուսնալու գիշերը Վափորի ներուցին մէջ հասանքէն քշուելով Օսմանեան նաւու մը զարնուեցաւ, և ծանրապէս փնտտելով ծովաւայդ եղաւ, բայց մէջի մարդիկն ազատեցան :

Վազրթ կը ծանուցանէ թէ Աթէնքի մէջ կազմեալ դրամաներգներ ներու ընկերութիւն մը 7—800 հազար ոսկոյ արժողութեամբ 100 նոց կեղծ թղթադրամներ շինելով վճար

ղրկել է, ուստի կը խորհին եղեր Օսմանեան ուրիշ քաղաքներ յրուել : Բայց վճարի ոտկանութիւնն իմասնալով հեռագրեր է Կ. Պօլիս և յիշեալ ընկերութեան թէ Աթէնքի և թէ վճարի անդամները ձերբակալու համար պէտք եղած միջոցները ձեռք առնուելու են :

Մանսուխթըրի գաւառին մէջ հաստատեալ պաշարման վիճակը վերցուա

ԿՈՄՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԵՐՈՒՄՈՒՄԻ	
Երկրի իրիկուն դոցուեցաւ	42.49
Այս առաւօտ բացուեցաւ	42.20
Կէս օրին	42.21
Բուռն իրիկութեան փոքր	42.50
Թղթադրամ	42.58
ԸՆԹԱՅՑ ԱՐԺԵԹՂԹՈՅ	
Կ. Պօլիս 12 Յունիս	
Ստիթէ Եւսէրայի բաժնի	4.45
Փոխանակութեան	3.
Կ. Պօլիս Պանքային	6.
Քրէտի Եւսէրայի	4.25
Քրէտի Օսթրո-Թիւրք	—
Փոխ	
• 1863	63
• 1865	70
• 1869	68
• 1872	21
• 1873	60

Օսմ. կայսերական Պանքան այսօր 425 դր. դին օրըստ է փոխանակութեան :

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ՀՐԱՒԵՐ

ԱՅ. Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԵՐԵՎԱՆԻՍԵՆ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ յունիս 19 ի Դաւթիս :

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ մը 6 ին և գոյուի 10 ին :

Հրաւիրեալ են երեսփոխան Էֆէնտինքը՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ :

1879 յունիս 15 ի գիւմայ Սրբա-Պարքին Հայոց դան Պատրիարք հօր Կ. Պօլիս Նորին խորհրդական

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՒՍԻՍ ԵՄԻՐՈՒՍԵՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշուեկէի ու կեդր. վարչութեան 79—80 տարւոյ :

2. Ընտրութիւն Գ. Ատենագիրի :

Ատենագիր Մ. Յ. ՄԷԼԵԱՆ

Երեկ Գեր. Խորհրդական Սրբա-զան Հօր նախագահութեամբ խառն ժողով գումարեցաւ, և Ս. Պատրիարք Հօր առ Բ. Դուռն տուած պատ-

ճառարանեալ հրաժարականի խնդրովն զբաղեցաւ :

Խառն ժողովը կողմէ երեք եկեղեցականէ և երեք աշխարհականէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը Ս. Պատրիարքին ներկայանալով կարեւոր տեսակցութիւն մ'ունեցաւ, և վաղը վերադառնալով խառն ժողով պիտի դուրսնայ :

Արքեպիսկոպոսի տղայինք Ս. Պատրիարք Հօր առ ազգն մատուցած անձնուէր ծառայութեանց նկատմամբ ընդհանուր շնորհակալաց ուղերձ մը ղրկած են, որոյ մէջ արտայայտեալ հայրենասիրական և երախտագիտական ազնիւ զգացումները մեծ պատիւ կը բերեն յիշեալ ազգայինոց :

Ինչպէս որ ծանուցեր էինք, անցեալ երկուշաբթի իրիկուն Օրթագիւղի Բարեւէր ընկերութեան թատրոնին մէջ Գեր. Հ. Մաղաքիա վարդապետ Օրմանեան՝ գեղեցիկ բանաստեղծութիւն մ'ըրաւ, բնաբան դնելով իւրեն « Հայուն անցեալը, ներկայն և ապագայն » : բանաստեղծութիւն մը, որ իւր ազգասիրական և հայրենասիրական լինում իմաստներով մեծ աւելանքով իւր ազգայնոց վրայ, որոյ մէջ էր նաեւ Ամեն. Խորմեան սրբազան, Օրթագիւղի կաթողիկէ Հայոց մեծաւոր Գեր. Հ. Եղեղեցեալ Սեւան և այլ քանի մ'եկեղեցականք, ինչպէս նաեւ բաղնիքի նշանաւոր ազգայինք, երկու սեռէ :

Ունեցելով ստեղծ ծախահարուեալք իրենց ջանք ու հոգիներն յայտնելէ ետեւ, ինքեցին Գեր. Հ. Օրմանեանէն որ իւր բանաստեղծութիւնը Մասիսի միջոցաւ հրատարակել տալու հաճի ի տեղեկութիւն ազգին : Եւ ալ ընդունեց. հետեւաբար այն խնդրանաց համեմատ մեք ալ լիակնք հրատարակել վստահ լինելով որ մեծ հաճութեամբ պիտի կարդացուի աւանդապէս Հայերէն :

Բերա 14 յունիս. 1879

... Խմբագրատեալ.
Հաճեցէ երկաթուղի տնիւն մը շնորհել Զեր ազգագրութեան յոռաշինոյ թուոյն մէջ :

Բերայի տղային երկուս վարժարանաց Հոգաբարձութիւնն պատիւ կը հոմարի յայտարարել թէ մօտ օրերս հոն գուցեալ բարեյիշատակ ձանձնակիցութեան Եֆէնտի Սանտոյեանի եղբայր Մեծապատիւ Զիլմէ Էֆէնտի Սանտոյեան

ուայ և պարծանաց հետ : Եթէ ըստեմք թէ Ատրեստանեայ պէս տեղեկութեան եղած եմք, կամ Պարսկացի պէս զօրաւոր, եթէ ըսեմք թէ Յունաց պէս քաջարի եղած եմք կամ Հռոմէականաց պէս անյաղթ, պարտաւորեալ ինքեցին կը խաբեմք : Թէ որ պատմութեանց աւելի ճիշտ աղբիւրներուն հետեւեմք, և եթէ Մարաբասեան աւանդութեանց շատ կեանքը ուղղութեան ուղեւոր երթարկել, ինչ կը մնայ Հայոցն բայց եթէ Արշա-կունեաց հարստութեան նախաբրիստեան դարը, երբ Արաշէս և Տիգրան Ասիական պետութեանց գլխաւորութիւնը ձեռք ձգեցին, Սեւեականաց Յունական արքայ զարաւելին և Հռոմէականաց արքայանքը ընկերակցին : Ասիէ դատ Հայաստան ղինուող իշխանութեան ու տիրապետութեան նկատմամբ փառաւոր դիրք մը չներկայացներ մեզ ցորչափ գիտեմք թէ Հայկազեան հարստութեան նախաբարքի թաղակալը՝ Նիսուէի և Բաւրեանի գեղացի ահա ի ինքն կը ճանչ

+

հարեհամեկու յանուն հարեհեան երկ-
սեռ վարժարանի յիսուն Օսմ. լիւս նը-
ւերէլ, ի նպատակ դաստիարակութեան
աղքատիկ մանկուոյն :

Հողաբարձութիւնն հրապարակու իւր
շնորհակալեաց հաւատարմի կը յայտնէ Մե-
ծապատիւ ձիւնէ Լիւնտին, որ ինք-
նայոժար բարեգործութեան մարդասիրա-
կան օրինակ մը կը նմանէ իր նման բարե-
սիրաց, և անմահ կը հանդիսացնէ իւր եղ-
բոր յիշատակն, որ արդէն իր արարքովը
« Հայր աղքատաց » մեծ անունն ստացած
էր :

Ընդունեցէք մեր անկեղծ յարգանաց
հաւատարմքը :

Ի դիմաց Հողաբարձութեան
Ու. Կէֆէ-Նիքոսեան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՅԻՆ ԹԵՐԻԹ անու-
նով անցեալ տարի Տփլիս հրատա-
րակիլ սկսած ամսագրոյ մը մէկ քա-
նի թիւերն ուսացանք այս շաբթու :
Մեր մէջ ամենէն յետեւեալ վիճակի
մէջ գտնուող բաներէն մին ալ ման-
կավարժական տրուեստը լինելով,
այդ նիւթին վրայ ճառող թերթի մը
պէտքը չատնաց ի վեր կ'ըզացուէր .
ճատի գոհութեամբ կը տեսնենք որ
Տփլիսի մէջ ուսումնական և աղքա-
տէր աղքատաց խմբակ մ'այս պակա-
սը լրացնելու ձեռնարկած են Մե-
ծաբոյ Պ. Յակոբ Տ. Յոսաննէսեանի
անօրէնութեամբ : Մանկավարժական
ամսագիրը կը պարունակէ աղքատիկ
դաստիարակութեան և ի մասնաւե-
րի մանկավարժութեան վերաբերեալ
կարեւոր յօդուածներ, դասական գը-
րեանց քննադատութիւններ, երեւելի
մանկավարժներու կենսագրութիւն-
ներ, և մանկավարժութեան վերա-
բերեալ ուրիշ օգտակար գրութիւն-
ներ, որք մեծապէս կրնան նպաս-
տել մանկավարժական կարեւոր ար-
ւեստն աղբիւն մէջ զարգացնելու :

Կը յուսանք որ այս նոր ամսա-
տետրը թուրքիոյ մէջ ալ արժան
եղած ընդունելութիւնը կը գտնէ :

Կարինէն հետեւեալը գրուած է մեզ .

« . . . Խնայողի տէր .

Աղքատիկութիւնը ամեն մարդ բերա-
նօց կը խօսի և կը ձեռնայ, բայց ճիշ-
տաւ աղքատները իրօք գործողն է և ոչ
թէ բերանը ըսողը, ահաւարիկ այս մե-
տերս դիտուելի անձն է, որ աղ-
քատէր և ազնիւ պէյի մը օգնութեամբ
արդար ասեանի մը մէջ խաւարէն լոյսը
եղաւ, որպէս :

Նրեք ամիսի չափ կընէ դեռ ռուսե-
րուն քաղաքէն մեկնելէն չորս և հինգ օր
ուռաջ, դիւեր մը մէկ քանի սրիկայ տու-

նային, Արշակունի թագաւորը Պար-
թեաց հովանւոյն կը վստահէին, և
վերջի ժամանակներուն մէջ Պարթեաց
և Հռովմայեացոյ Պարսից և Յունաց
անբնակեղէն դէմքադարականութեանց
կը ծառայէին : Իսկ Ռադրատունեաց
Արծրունեաց, Կարսի, Սեբաստիոյ և
Ռուբինեանց իշխանք և թագաւորք՝
ճիշդը խօսելով՝ Հայոց իշխանք էին
և թագաւորք, այլ ոչ Հայաստանի :
Եթէ մեր անցելոյն մէջ քիչ է Հա-
յաստանի փառքը իւր պիտութիւն,
բայց շատ է Հայուն փառքը իւր աղբ-
իւր նախնիք չլուցելի իրենց աշխար-
հը Մեծ Հայաստան, այլ յիշուի ան-
ւանեցաւ այն Մեծ Հայք, Հայք եր-
կար ժամանակ օտարին լուծին ներ-
քե մնացին, վստի դի շուրջանակի դո-
րուտը աղքատ պաշարած էին իրենց
երկիրը : Հայք այնպիսի դէպքեր կը-
րենցին որ իրենց աղբութիւնը բընա-
ւին կրնար քննել : Հայք այնպիսի վար-
ձանաց տակաւին, որոց առջև դորա-
ւորագոյն աղքատ տկարացան, և ի-
րենց գոյս թիւնը չկրնան սրտաւար-

նըս մանկելով, յանկարծ վրաս յարձակե-
ցան, զլուսն մէկ քանի տեղէ վերաւո-
րեցին, և խեղճ ընտանեացս պատուոյն
ալ չխնայելով զայն բռնաբարեցին վերջ,
ունեցած քիչ շատ ստակս ալ անտուկս
ալ կոտորելով առին տարին : Սոյն գիշերը
թէպէտ աստիականութեան կողմէն և
քիչ մարդ բռնուելով, ռուսերը զանոնք
բանտարկեցին, սակայն ռուսերը այն
օրերը Կարինէն մեկնելու վրայ ըլլալով,
երեք բանտարկեալները Օսմանեան կա-
ռավարութեան թողուցին, որպէս զի ա-
նոնց դատը վարէ, և պէտք եղածը տը-
նօրինէ : Բայց ահա որ երեք ամիսէ ի
վեր բաւ մը երևան չեղելէ զատ, այս
մօտերս յիշեալ երեք բանտարկեալներն
ալ իւր անմեղ համարելով, ազատ թող-
լու խօսք մը կը ըրէին : Զայս խմբակով,
յուսահատեալ վիճակին մէջ Պօլիսէն հոս
եկած, և պատերազմական տեսանի ան-
դամ Թաղաբեան մեծապատիւ Գըրի-
գոր պէյին ներկայանալ յանձն առի :
Եւ երթալով իրեն իմ անտանելի ցուիս
օգնութիւն մը հասցնելու նոյն աղքատէր
պէյին խնդրեցին : Յիշեալ պէյն ամե-
նայն սիրով զիս ընդունեց, և զանազա-
ներուս լաւ մը անդեակ ըլլալէն վերջը,
խոնարհեցաւ մինչև անդամ տունս ալ
զալ, և ընտանեացս վիճակն ալ տեսնե-
լով, շատ ցաւ դրաց : Եւ այս խնդիրը
արդարութեամբ լուծեն խոստացաւ :
Արդարեւ երկրորդ օրն անմիջապէս մեր
գտնող պատերազմական տեսանի մէջ
տեղի ունեցաւ, և քառասունը և ութը
ժամուան մէջ մեր տունը մտնող աւա-
զակները, որ քաղաքին մէջ ազատ կը
չէլէին, բռնուեցան, և խոստովանելով
իրենց յանցանքը, արժանի եղած պատժ-
ւոյ դատապարտուեցան : Նրեք ամիսէ
ի վեր չը գտնուած զողորուն, երկու
օրուան մէջ ասեանի կողմէն գտնուե-
լուն լուս կը կենամ, Զեր մեծապատու-
թեան թողով պէտք եղած դիտողու-
թիւններն ընելու : Նոյն գիշերը գողցած
բաներէն ալ քիչ օրէն ձեռքս հասնելուն
յոյսը ունենալով, կը խնդրեմ խմբակի
տէր, որ վերջիցեալ աղքատէր Պէյին
շնորհակալութիւններս ձեր աղքատու
մօտակայ թերթերուն մէջուն միջոցաւ
հրապարակաւ հրատարակելու բարեհա-
ճիք, ձեր կողմէն պէտք եղած դիտու-
թիւններն ալ աւելցնելով :

Միամ երախտապարտ

ԱՇՃԻ ԿԱՐԱՊԵՏ
ԿՍՐԵՆՑԻ

Տփլիսի Մշակ օրաթերթին հետե-
ւալ լուրը կուտայ :

« Մի թիւրքիստահայատակ մահմե-
տական կամենալով ընդունել քրիս-
տոնականութիւնը՝ գիմել է մեր հայ-
լուսաւորչական հողերը իշխանու-
թեանը, թէ թիֆլիսում և թէ Ս.

նել, իսկ Հայ աղգը կայ, և և էր և
եղև աղգ մի ոչ աննշանակ, մեծա-
գոյն աղգաց հետ միջեղի կարող : Եւ
միջանց մէջ ոչ միշտ յետադաս, և
եթէ ոչ քաղաքական և իշխանական
դժուրութեամբ, այլ զօրութեամբ մը-
տաց և զօրութեամբ բարուց իրեն
տիրապետողներուն վրայ ալ աղգե-
ցութիւն գործածելու բաւական :

Նա որ քննադատական մակածու-
թեանց լուսով կը մտնուէ սահած դա-
րերուն մէջ մարդկային գործոց ըն-
թացքը, յար և նման է փորձառա-
կան բնագիտութեան հետամուտ ե-
ղողին հետ : Սա տիեզերաց բնու-
թիւնը, նա մարդոյս բնութիւնը կը
գնեն : Երկուքն ալ բնագիտութեան
կանոնը և օրէնքը և հիմունքը և ըս-
կողութեան կը գիտեն, կը խուզեն, կը
գտնան, կը հաւատան, կը հաստա-
տեն : Ահա երեւոյթ մը բնութեան : Հո-
յոյն անցեալը : Մէկ կարգէն այնպիսի
կէտեր ունի, որովք շատ հին աղգաց
միայ կը գերազանցէ : միւս կողմէն
այնպիսի կէտեր ալ ունի, որովք ուրիշ

լիմաճնում, — և ոչ մի տեղ նրան
չու գեցին ընդունել : »

Այս լուրը տալէ և առ Մշակ խը-
տիւ կը կշտամբէ մեր հող և որակա-
նութեան այս ընթացքը իւրեւ ան-
նիւրի յանցանք :

« Եթէ, կըսէ, մեր հող և որականու-
թիւնն այս ձևով կը վարվի, նա եր-
բէք չի կարողանայ ոչինչ ներգործու-
թիւն ունենալ ոչ միայն հայերին շը-
ջապատող այլադասան կիսավայրե-
նի ցեղերի վրա, այլ և երբէք ոչինչ
ներգործութիւն չի ունենայ մեր
մահմետականացած եղբայրների վրա,
որոնք կուզենան վերադառնալ ի-
րանց պապերի եկեղեցու գիրկը : »

Նոյն լրագրին մէջ կը կորդանք
նաև հետեւեալը .

Ղարսից մեզ գրում են հետեւեա-
լը . Գեղարմաբերի 5 հին երեկոյեան 11
ժամին Չարսու փողոցում դարձեալ
հրդեհ ընկաւ : Հրդեհի ահագին բու-
ցից լուսաւորված էր ամբողջ քաղա-
քը : Այնքան բազմութիւն էր հա-
ւաքվել, որ մարդ տեղից չէր կարող
շարժվել : Կրակը հանդաւ Ալեքսանդ-
րապօլցի և Թիֆլիսից երկտասարդ-
ների ջանքերով, որոնք հարկաւոր
դէպքում կրակի մէջ էին մտնում :
Ներկայ էին զինուորական նահանգ-
ապետը և բոլոր պօլիցիականները :
Շատերը օգուտ քաղելով ընդհանուր
խաւնալութիւնները, մօտակայ խա-
նութիւններից ապրանք էին գողանում :
Փոքր ստիճանաւորներից մի քանի-
սը ծաղրում էին ժողովուրդին ասե-
լով, որ մինչև այժմ փողոցները տը-
գեղ անձն էին, այսուհետև հրդե-
հի շնորհով նրանք կը կանոնաւորվին :
Այդպիսի խօսքերը յուսահատեցնում
են և կասկածանքի մէջ են ձգում
ժողովրդին : Այդպիսի խօսակցութիւն-
ներ լսելուց յետոյ բնակիչները կար-
ծում են, որ իրոմամբ հրդեհ են ձը-
գում փողոցները կանոնաւորելու հա-
մար :

Դարձեալ նոյն լրագրին մէջ .

Մեզ հաղորդում են Ղարսից, որ
օրերումս Երզրումի Հայ կաթօղիկների
առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպո-
սը օծել է Ղարսի սուրբ Լուսաւորիչ
կաթօղիկների եկեղեցին : Հանդիսի
ժամանակ մեծ բազմութիւն է ներ-
կայ գտնվել : Ստեփաննոս Սրբազա-
նը ժողովրդին միութիւն է քարո-
զել, նա ասել է, որ դաւանութիւ-
նը երկպառակութեան պատճառ չը
պէտք է լինի, որ հայ կաթօղիկները
հայ լուսաւորչականները և հայ լիւ-
թերականները միայն դաւանու-

հին աղգաց շատերուն յետադասելի
է : Նկատէ՝ Հայ առջի տեսութեան
ներքև, ամենեցուն պատկառելի
պէտք է ըլլայ : Նկատէ՝ Հայ երկրորդ
տեսութեան ներքև, շատերը հազիւ
թէ իր անունը մտադրութեան արժա-
նի կը դառնան, ինչ է մեկնութիւնը :

Հայուն անցեալն անհատական կա-
ռարկութեանց նշանակ է, իւրաքանչիւ
չիւր Հայ անհատ լիովին ունեցած այն
իղձերը և զգացումներն և ձիրքե-
րը և կարողութիւնները, որովք իւրա-
քանչիւր աղգի բնական կեանքը կա-
պահովուի :

Հայը զգաց խորամտութեամբ
մէջ այն ոգին, որ կը զատէ զինքն ու-
րիշ ժողովուրդէ :

Հայը պահեց հաւատարմութեամբ
այն նշանները, որովք աղգաց պանազա-
նութիւնը կը յարատեւեն :

Հայը գործածեց աշխրջութեամբ
այն միջոցները, որովք աղգաց իրա-
րու խառնումը կը խափանուի :

Հայը ցուցաւ այն անհատական
խորխորութիւնը և արիւթութիւնը, որով
ալ մի մեղք իկ ահեղ բանական ձևա-

թեանը են բաժանված, բայց մի և
նոյն աղգութեան են պատկանում :
որ այդ դաւանութիւնները ունեցող
բոլոր հայերը պէտք է միացած ոյ-
ժերով աշխատեն իրանց աղգային
ընդհանուր շահերի համար : Սրբա-
զանի քարոզը շատ համակրական էր :
Ցանկալի կը լինէր, որ մեր արեղա-
ներն էլ իրանց քարոզներով մեկնէին
հասարակութեանը, որ դաւանու-
թիւնը և աղգութիւնը զանազան
դադարներն են, որ մի և նոյն ըն-
տանիքի անդամները կարող են զա-
նազան դաւանութիւններ ունենալ,
բայց մի և նոյն աղգութեան պատ-
կանիլ :

Դարձեալ .

Թիֆլիս 21 դեկտ.

1872 թուականին Թիֆլիսում եւ
զած օտարականները մի դաւան հա-
ւաքեցին ժամանակ անցկացնելու հա-
մար : Այդ դաւանքը անցել է ինչ
մօտ : Պ. Պ. օտարականները մինչև
անգամ մտաւայել են դրա դոյաւթեան
մասին : Այդ դաւանքի անկողին մի մա-
սը, այն է 25 բուրլ նուիրում եմ յօ-
գուտ Արարատեան ընկերութեան :
Հինգ բուրլ էլ նուիրում եմ իմ կողմից :

Միւրիւ Ռուսապետ

Ի Լ Ա Ն

Նիդամիէ երգաք անպարը իշխե-
թարիթի գտարարնաւն իմկարէն
ալթը ալ նիհայէթինէ գաւաւր հէր
նէ միգաւր լուղումի օլուր տա թա-
լէպ օլունուր իսէ օլ միգաւրը թէս-
լում իտիլմէք վէ բէսմի կէօմիլը իլէ
թէսիլմինէ գաւաւր քեաֆֆէի մէսա-
րիֆի միւթէտհիւտինէ այլու օլմիգ-
վէ էսմանը վերլիլմէք մագաւուզ օէ-
նէսինին վերլուտիլլէ մաւալէսինին
խիթամիլնաւ սիմ մէհիտիլէ երկիրմի
ղըշ հիսապիլլէ Նիդամիէ խաղիլմէսին-
տէն վերլիլմէք շարթը վէ շէրայիլթի
սայրիլէսիլլէ միւլայեա օլունաւաղը
էվլիլմէ իլան գըլլման թըրիլմա զէյ-
թունունուն ինրա իտիլլէ միւնաքա-
սաւրնաւ պէհէր զըյէսի եէթմիլ
բարաւ թալիլի էօհալէսինաւ գա-
լուպ վէ քեանունի սանիի բումի-
նին օն եէտիննի չէհալլէսինի կիւ-
նիւ թէքար միւնաքաւայի ուլէնիլէ-
սի պիլ ինրա գաւաւր գաթիլի վէ
րիլլէն յիւտէն, իմասընա թալիլ օլուն-
լարլն եէվմի մէղրիլուրտէ սաւթ եէ-
տիտէ Տարի Շաւրայի տաքէրիլլէ կէ-
մէլէրի :

14 քեանունի սանի 1879

Պապը Սէրտքէրի

ւրները կը կաշկանդեն :

Հայը ունեցաւ այն յատուկ ձիւ-
քերը, որովք աղգութեան անհատք
են ինչ որ են :

Հայը վարեցաւ այն անձնասիրու-
թեամբ, որով կը սիրուի ինչ որ իւր է :
թէպէտեւ թերի ըլլայ :

Հայը կապուեցաւ իւր ընդունի,
իւր կրօնից, իւր ծիսին, իւր ոսկո-
րութեանց, թէպէտեւ ցերեցան վի-
ճակի մէջ :

Հայը հոգաց որ արհեստիւ և ճար-
տարութեամբ և վաճառականու-
թեամբ ձեռք ձգէ ինչ որ չկրցաւ
ստանալ զօրութեամբ :

Հայը ինչ որ ունեցաւ և ինչ որ
ալ գուրէն ընդունեցաւ, անոր սերի-
հական աղգային ձև մը տուաւ, ինչ-
պէս գեղեցիկ կը բացատրէ այդ կէ-
սը Մեծ Մարիս Էֆէնտի Աղաբէգ-
եան ի թղթին զոր գրեց « Հայոց աշ-
խարհի աղգի և եկեղեցու աղգայնու-
թեան մտքի » ուր իմաստաւոր հան-
ճարդ մ'աղգ տալը կը պայման ընթեր-
ցուր :

Յաւիլ Բաւիլ

ՏՓԵՒՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան,
ԿԵՆՏՐՈՆ. Պետրոս աղա Հիւսկեան: